


« 15 » Երեւնբրի 2016թ.



«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ և ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄՆԵՐԴՐՈՒՄ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ

և ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

(Նոր Խմբագրությամբ)

Երևան 2016թ.

1. Հասկացություններ

1.1. Սույն ընթացակարգում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

- 1.1.1. «Ընկերություն»՝ «ԱԼՖԱՍԵԶՈՒԻԻԹԻԶ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն,
- 1.1.2. «Հաճախորդ»՝ անձ, որի հետ Ընկերությունը նախատեսում է կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր կամ, որը հանդիսանում է հավատարմագրային կառավարման հիմնադիր: Հիմնադիրը , միաժամանակ, կարող է հանդես գալ որպես Շահառու:
- 1.1.3. «Կառավարիչ»՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որն՝ առաջնորդվելով գործող օրենսդրությամբ և իրավական ակտերով, հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակներում իրականացնում է որոշակի ժամկետով իրեն հանձնված ակտիվների հավատարմագրային կառավարում: Կառավարիչը չի կարող լինել Շահառու:
- 1.1.4. «Շահառու»՝ հավատարմագրային կառավարման հիմնադրի կողմից պայմանագրում նշված անձ, որի օգտին Կառավարիչը իրականացնում է պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարում
- 1.1.5. «Հաշվետու անձ»՝ Ընկերության կազմում տվյալ հաշվետվությունը կազմելու իրավասություն ունեցող համապատասխան աշխատակից,
- 1.1.6. «Իրավաբանական անձ»՝ ՀՀ-ում կամ օտարերկրյա օրենսդրության համաձայն իրավաբանական անձ համարվող սուբյեկտներ, այդ թվում միջազգային կազմակերպություններ,
- 1.1.7. «Արժեթղթերի և/կամ դրամական միջոցների հավատարմագրային կառավարում» կամ որ նույնն է «արժեթղթերի փաթեթի կառավարում»՝ Կառավարչի կողմից պարզակազմի դիմաց իր տիրապետմանը հանձնված հաճախորդին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) Կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարում՝ հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն,
- 1.1.8. «Պայմանագիր»՝ հավատարմագրային ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է Հաճախորդի արժեթղթերի և դրամական միջոցների հավատարմագրային կառավարման կապակցությամբ կողմերի իրավահարաբերությունները, սահմանում նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բովանդակում օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված այլ պայմաններ,
- 1.1.9. «Ներդրումային հայտարարագիր»՝ Պայմանագրի շրջանակներում հավատարմագրային կառավարման օբյեկտ հանդիսացող դրամական միջոցների ներդրման ուղղությունները, պայմաններն ու կարգը, այդ թվում՝ ներդրման կառուցվածքը և սահմանափակումները սահմանող փաստաթուղթ,
- 1.1.10. «Հավատարմագրային կառավարման օբյեկտ»՝ արժեթղթեր և դրամական միջոցներ, որոնք տրվել են հավատարմագրային կառավարմանը, ինչպես նաև բոլոր այն արժեթղթերը և դրամական միջոցները, որոնք Ընկերության կողմից ձեռք են բերվել հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության արդյունքում,
- 1.1.11. «Դեպո հաշիվ»՝ Դեպոզիտարիայի, կամ այլ պահառուների հաշվառման համակարգում ընդհանուր չափանիշներով միավորված գրառումների համախումբ, որը նախատեսված է արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման համար,
- 1.1.12. «Թրաֆային ընդհանուր դիրք»՝ Ընկերության կողմից հավատարմագրային կառավարման շրջանակներում ունեցած բոլոր դրամական միջոցներով և/կամ արժեթղթերով բացված դիրքերի ամբողջություն,
- 1.1.13. «ՀԿ աշխատակից»՝ Ընկերության աշխատակից, որն ունի համապատասխան որակավորում,
- 1.1.14. Սույն ընթացակարգում և դրա հավելվածներում օգտագործված հասկացություններն ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում և այդ շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերում կիրառվող նշանակությունը:
- 1.1.15. «Հաշվետու ժամանակաշրջան»՝ Եռամսյակ, այսինքն՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կողմերի համար առաջին հաշվետու եռամսյակ է համարվում Պայմանագիրը կնքելու օրից մինչև տվյալ եռամսյակի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն կանոնները սահմանում են Ընկերության կողմից ֆիզիկական և Իրավաբանական անձանց դրամական միջոցները և/կամ արժեթղթերը հավատարմագրային կառավարման (այսուհետ՝ ՀԿ) վերցնելու կարգը՝ համաձայն Ընկերության կողմից ընդունված ՀԿ նվազագույն պայմանների և գործող օրենսդրության: Դրամական միջոցները և/կամ արժեթղթերը ՀԿ վերցնելը չի հանգեցնում դրանց սեփականության իրավունքի փոխանցմանը Ընկերությանը:

2.2. Հաճախորդի դրամական միջոցների և/կամ արժեթղթերի ՀԿ-ն Ընկերության կողմից կարող է իրականացվել՝

2.2.1. Ընկերությունում գործող ՀԿ ռազմավարություններից որևէ մեկի կիրառմամբ,

2.2.2. Յուրաքանչյուր հաճախորդի համար մշակվող անհատական ռազմավարության կիրառմամբ,

3. ՀԿ ծառայությունների ներկայացում

3.1. ՀԿ ծառայություններով Հաճախորդի հետաքրքրվածության դեպքում ՀԿ աշխատակիցը Հաճախորդին համառոտ ներկայացնում է ՀԿ ծառայություններն ու դրանց տեսակները, պայմանները, սակագները, կառավարման հանձնվող միջոցների նվազագույն ծավալի նկատմամբ Ընկերության պահանջները, հնարավոր ռիսկերի, արժեթղթերի ու թողարկողների մասին տեղեկություններ, ինչպես նաև տեղեկություններ իր՝ որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձի մասին:

4. Հաճախորդի մասին տեղեկատվություն

4.1. ՀԿ աշխատակիցը համաձայն ՀՀ ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակագի Հաճախորդից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին, ինչը հնարավորություն կտա առաջարկել Հաճախորդին պրոֆեսիոնալ լավագույն կառուցվածք, որը առավելագույնս համապատասխանում է հաճախորդի պահանջներին:

4.2. 5.1. կետում նշված նպատակով Հաճախորդը լրացնում է հարցաթերթիկ (Հավելված 1):

5. Հաճախորդի դասակարգում

5.1. ՀԿ աշխատակիցը Հաճախորդից ստացված տեղեկությունների հիման վրա Հաճախորդին «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակագի պահանջներին համապատասխան դասակարգում է պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ խմբերի:

5.2. ՀԿ աշխատակիցն այդ մասին տեղեկացնում է Հաճախորդին:

5.3. Եթե Հաճախորդը համաձայն է այդ դասակարգման հետ, ապա տալիս է համապատասխան գրավոր հայտարարություն ներդրումային ծառայություններ մատուցող անձին այն մասին, որ.

- 1) համաձայն է որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ,
- 2) տեղյակ է, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

6. Տեղեկատվության տրամադրում

6.1. ՀԿ աշխատակիցը համաձայն ՀՀ ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակագի Հաճախորդին ներկայացնում է տեղեկատվություն, պարզաբանում Հաճախորդի ներդրումային ռիսկեր կրելու ցանկությունն ու կարողության աստիճանը՝ հիմք ընդունելով նրա ֆինանսական վիճակի (վճարունակություն) և ներդրումների նպատակի մասին գրավոր տեղեկությունները՝ լրացված հարցաթերթիկը (Հավելված 1):

6.2. Հաճախորդն՝ Ընկերության ՀԿ աշխատակցի հետ համատեղ որոշում է ռիսկի ընդունելի աստիճանը, համապատասխան որի հետագայում ձևավորվում և կառավարվում է նրա արժեթղթերի փաթեթը:

6.3. Ռիսկի ընդունելի աստիճանը որոշելու նպատակով՝ Ընկերությունը տեղեկացնում է Հաճախորդին արժեթղթերում ներդրումներ կատարելիս ուղեկցվող ռիսկերի (Հավելված 2) և դրանք նվազեցնելու հնարավորությունների մասին:

6.4. Անհրաժեշտության դեպքում Հաճախորդից կարող է լրացուցիչ պահանջվել ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ հայտարարագիր (Հավելված 3):

7. Ծառայությունների և սակագների ներկայացում

7.1. ՀԿ աշխատակիցը՝ շարունակելով ՀԿ գործընթացի սկզբնական փուլը, Հաճախորդին առավել մանրամասն ներկայացնում են ՀԿ ծառայության տեսակներն ու սակագները (Հավելված 12):

8. Հաճախորդի որոշում

8.1. Ծառայությունների ու սակագների մանրամասն ներկայացման հիման վրա Հաճախորդը վերջնական որոշում է կայացնում ծառայություններից օգտվելու վերաբերյալ: Դրական որոշման դեպքում անցում է կատարվում գործընթացի հաջորդ փուլին, իսկ Բացասական որոշման դեպքում գործընթացն ավարտվում է այս փուլում:

9. Ռազմավարության ընտրություն

9.1. Հաճախորդը՝ Ընկերության հավատարմագրային կառավարման ծառայությունների օգտվելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, ընտրում է որոշակի ռազմավարություն, որն արդեն գործում է Ընկերությունում կամ ներկայացնում է այլ կամ առանձնահատուկ պահանջներ, որոնց հիման վրա Ընկերությունը կառուցում է նոր անհատական ռազմավարություն տվյալ Հաճախորդի համար:

10. Ներդրումային հայտարարագրի կազմում

10.1. Հաճախորդի կողմից ռազմավարության ընտրությունից հետո ՀԿ աշխատակիցը կազմում է ներդրումային հայտարարագիր (Հավելված 4):

11. Ներդրումային հայտարարագրի հաստատում

11.1. Ներդրումային հայտարարագիրը ենթակա է հաստատման Ընկերության գործադիր տնօրենի կողմից:

11.2. ՀԿ աշխատակիցը ներկայացնում է կազմված ներդրումային հայտարարագիրը Ընկերության գործադիր տնօրենի հաստատմանը: Ընկերության գործադիր տնօրենը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հաստատում է ներդրումային հայտարարագիրը կամ տալիս եզրակացություն՝ նշելով իր առարկությունները: Դրական որոշման դեպքում անցում է կատարվում գործընթացի հաջորդ փուլին, իսկ բացասական որոշման դեպքում՝ վերադարձ ներդրումային հայտարարագրի կազմման փուլին:

12. Իմաստալից հենանիշի սահմանումը

12.1. Հաճախորդը տեղեկացվում է արժեթղթերի փաթեթի արժեքի գնահատման մեթոդի և հաճախականության մասին: Արժեթղթերի փաթեթի գնահատման սկզբունքները սահմանված են Հավելված 4-ի 5.3 կետում, իսկ պարբերականությունը հաճախորդի հետ կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրում նշված հաճախականությամբ:

12.2. Հաճախորդը տեղեկացվում է, որ արժեթղթերի փաթեթի գնահատման հիման վրա հաշվարկված եկամտաբերությունը, նախորդ կետում նշված պարբերականությամբ, համեմատվելու է իմաստալից հենանիշի հետ: Արժեթղթերի փաթեթի եկամտաբերության հաշվարկի բանաձևը հաստատվում է Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ, ինչպես նաև ենթակա է վերանայման ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և դեպքերում:

- Իմաստալից հենանիշ սահմանելիս հաշվի են առնվում հաճախորդի կողմից ընտրված ռազմավարությունը, այն արժեթղթերի տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք կարող են իրականացվել այդ արժեթղթերի կառավարման շրջանակներում: Որպես իմաստալից հենանիշ կարող են հանդես գալ՝ Առաջատար բանկերի ավանդների տոկոսադրույքները, կամ դրանց հիման վրա կազմված միջինացված ցուցանիշները,

- Միջբանկային պարտքի շուկայի ցուցանիշներ (LIBOR և այլն),
- Երկրների պետական պարտքի տոկոսադրույքները կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշներ,
- Երկիրը, ռեգիոնը կամ ճյուղը բնութագրող բորսայական ինդեքսները,
- Գլոբալ բորսայական ինդեքսներ,
- Ապրանքային շուկայի ակտիվները, կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշներ,
- Ապրանքային շուկայի ինդեքսներ,
- Երկիրը, ռեգիոնը կամ ճյուղը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշներ,
- Գլոբալ մակրոտնտեսական ցուցանիշները
- Վերը նշված ցուցանիշների հիման վրա որոշակի կշիռներով կառուցված համախմբված ցուցանիշ:

12.4. Իմաստալից հենանիշի կառուցման և ներկայացման սկզբունքները համաձայնեցվում են հաճախորդի հետ Ներդրումային հայտարարագրում, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

Իմաստալից հենանիշը պետք է բավարարի հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա հաճախորդին համեմատել կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են հաճախորդի կողմից նշված սահմանափակումներին,

2) չպետք է հիմնվի տվյալ կառավարչի՝ անցյալում ձեռքբերված եկամտաբերության կամ տվյալ կառավարչի ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա

Ինչպես նաև իմաստալից հենանիշը կարող է հիմնվել նաև բորսայական ինդեքսների, բանկային ավանդների, այլ կառավարիչների կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունն արտահայտող ամփոփ ցուցանիշների, համանման գործիքների որոշակի խմբի համար հաշվարկված միջին եկամտաբերության և նմանատիպ այլ ցուցանիշների վրա:

13. Պայմանագրի կնքում

13.1. Հաճախորդի և Ընկերության միջև կնքվում է Պայմանագիր, որի անբաժանելի մասն է կազմում Ներդրումային հայտարարագիրը:

13.2. Որպես Պայմանագրի անբաժանելի մաս, Հաճախորդը գրավոր ձևով տեղեկացվում է դրամական միջոցների և/կամ արժեթղթերի ՀԿ ռիսկերի մասին (Հավելված 2):

14. Հավատարմագրային հաշվի բացում

14.1. ՀԿ գործընթացի իրականացման նպատակով՝ Պայմանագրի հիման վրա, Հաճախորդը ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների՝ պահառուի (բանկեր, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ տնտեսավարող սուբյեկտներ) մոտ բացում է արժեթղթերի հաշվառման համապատասխան հաշիվներ: Հաճախորդը լիազորում է Ընկերությանը կառավարել պահառուի մոտ բացված իր հաշիվները, տալով համապատասխան գրավոր համաձայնություն Պահառուին: Հաճախորդի եւ պահառուի միջեւ արժեթղթերի հաշվառման հաշիվների բացման պայմանագրում ամրագրվում է, որ պահառուն քաղվածքները եւ հաշվետվությունները տրամադրում է նաև Ընկերությանը: Ինչպես նաև ՀԿ գործընթացի իրականացման նպատակով Ընկերությունը կարող է անձամբ կնքել համապատասխան հաշվի բացման պայմանագիր ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց մոտ հաճախորդների ակտիվների կառավարման համար: ՀԿ գործընթացի իրականացման նպատակով վերոնշյալ հաշվի բացման մեկ այլ տարբերակ է հաճախորդի, Ընկերության եւ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց միջեւ կնքած եռակողմ պայմանագիրը:

14.1.1 Հաճախորդների դրամային միջոցները (ՀԿ պայմանագրի շրջանակում) հաշվառվում են Ընկերության կողմից ՀԿ նպատակով բացված բանկային հաշվում:

14.1.2 Ընկերությունը իրականացնում է Հաճախորդների դրամական միջոցների առանձնացված ներքին

հաշվառում:

14.2. Այնուհետև Ընկերության եւ Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հիման վրա իրականացվում է հավատարմագրային կառավարման հանձնվող ակտիվների դեպոնացում՝ ստորագրելով ակտիվների ընդունման/հանձնման ակտ (Հավելված 5):

15. Արժեթղթերի փաթեթի կառավարման գործընթացը

15.1. ՀԿ շրջանակներում ակտիվների կառավարումն իրականացվում է հետևյալ փուլերով.

15.1.1. Ընկերությունը հասանելի հետազոտական նյութերից և ռազմավարական գործընկերներից ստանում է գլոբալ շուկայական վերլուծություն,

15.1.2. Այնուհետև ՀԿ աշխատակիցներն իրականացում են ֆինանսական շուկաների և առանձին թողարկողների վերլուծություն,

15.1.3. Հաշվարկում են եկամտաբերությունն ու ռիսկերը: Գնահատվում և կանխատեսվում են առանձին թողարկողների վերաբերյալ ողջ շուկայական տեղեկատվությունը, տրվում է կանխատեսված եկամտաբերության ու ռիսկերի մակարդակի մասին եզրակացություն,

15.1.4. Հիմնվելով վերոնշյալ վերլուծությունների վրա և ելնելով արժեթղթերի փաթեթի կառավարման ռազմավարությունից/Հավելված 13/, որը նախապես համաձայնեցվել է Հաճախորդի (հավատարմագրային կառավարման հիմնադիր) հետ և ներառվել ներդրումային հայտարարագրում, ՀԿ աշխատակիցը կազմում է արժեթղթերի փաթեթի կառուցվածքը և հաշվարկելով փաթեթում ընտրված յուրաքանչյուր արժեթղթի օպտիմալ մասնաբաժինը, ձևավորում է արժեթղթերի փաթեթը,

15.1.5. Կազմված արժեթղթերի փաթեթը ենթակա է հաստատման Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Դիտողությունների առկայության դեպքում արժեթղթերի փաթեթի կառուցվածքը վերանայվում է և անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան փոփոխություններ,

15.1.6. Ընկերության գործադիր տնօրենի կողմից արժեթղթերի փաթեթի հաստատումից հետո, ՀԿ աշխատակիցը արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթերի վերաբերյալ կազմում է ներդրումային որոշումներ: ՀԿ աշխատակիցը գրանցում է ներդրումային որոշումները էլեկտրոնային գրանցամատյանում, որը ներառում է ՀՀ ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակարգի Գլուխ 14-ի բոլոր պահանջները: ՀԿ աշխատակիցը կազմում և հաղորդում է հանձնարարականները Ընկերությանը սպասարկող բրոքերներին՝ ի կատարումն: Ինչպես նաև, գործադիր տնօրենի ստորագրմանն է ներկայացնում գործընկերների հետ կնքված այն պայմանագրերը, որոնք անհրաժեշտ են հավատարմագրային կառավարման նպատակով իրականացվող գործարքների կատարման համար,

15.1.7. Արժեթղթերով իրականացված գործարքներն արտացոլվում են Թրասթային ընդհանուր դիրքում, որին անընդհատ հետևում են Ընկերության աշխատակիցները և իրականացնում փաստացի եկամտաբերության և ռիսկերի գնահատում,

15.1.8. Ներքին վերահսկողության նպատակներից ելնելով, Ընկերության գործադիր տնօրենի կողմից կատարվում է Թրասթային ընդհանուր դիրքի ընթացիկ վերահսկողություն,

15.1.9. Եթե Թրասթային ընդհանուր դիրքի վերահսկողության ընթացքում հայտնաբերվում են եկամտաբերության ու ռիսկերի շեղումներ արժեթղթերի

փաթեթի ձևավորման ընթացքում կանխատեսված եկամտաբերությունից և ռիսկերից, ապա վերադարձ է կատարվում արժեթղթերի փաթեթի կառավարման սկզբնական փուլին,

15.1.10. Բոլոր այն դեպքերում, երբ ընթացիկ վերահսկողության ընթացքում ոչ մի շեղում չի նկատվում, անցում է կատարվում գործընթացի հաջորդ փուլին:

16. Հավատարմագրային կառավարման մասին հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը

16.1. Ակտիվների ՀԿ վերաբերյալ ՀԿ աշխատակիցը (Հաշվետու անձը) ՀՀ ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակարգով սահմանված կարգով պատրաստում է հաշվետվություններ և ներկայացնում Հաճախորդներին կապի հուսալի միջոցով: Կապի հուսալի միջոցները ամրագրված են Պայմանագրում:

16.2. Հաճախորդներին տրամադրվում են հետևյալ հաշվետվությունները.

16.2.1. ՀԿ ընդունված արժեթղթերով և/կամ արժեթղթերի ձեռք բերման համար նախատեսված դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն

հաճախորդի հետ կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրում նշված պարբերականությամբ: Արժեթղթերի փաթեթի հավատարմագրային կառավարման վերաբերյալ հաշվետվություն:

16.3. ՀԿ աշխատակիցները առնվազն եռամսյակը մեկ պատրաստում և գործադիր տնօրենին են ներկայացնում ՀԿ վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները (Հավելվածներ 10/11).

16.3.1. արժեթղթերի փաթեթի կառավարման մասին հաշվետվություն,

16.3.2. արժեթղթերի փաթեթի կառուցվածքի մասին հաշվետվություն:

16.4. ՀԿ աշխատակիցը, մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, Ընկերության հաշվապահական հաշվառումը վարող կազմակերպությանն է տրամադրում, հավատարմագրային կառավարման շրջանակներում իրականացված գործարքների փաստաթղթային հիմքերը, դրամական և արժեթղթերի հաշիվների քաղվացքների սքանավորված կամ էլեկտրոնային, իսկ ահրաժեշտության դեպքում նաև թղթային տարբերակները: Գործարքների փաստաթղթային հիմքերի, դրամական և արժեթղթերի հաշիվների քաղվացքների ներկայացման ձեռք էլ կարգը կարգավորվում է հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերության և Ընկերության միջև կնքված պայմանագրով:

16.5. ՀՀ ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 4/03-ով նախատեսված հաշվետվությունները ներկայացնում է Ընկերությունը: Հաշվապահական հաշվառմանը վերաբերող հաշվետվությունները կազմում է հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունը, իսկ ֆինանսական գործարքներին վերաբերող՝ Ընկերությունը:

17. Պայմանագրի դադարեցում

17.1. Հաճախորդը կարող է պահանջել ակտիվների վերադարձ և պայմանագրի վաղաժամկետ լուծում, ինչի մասին Հաճախորդը պարտավոր է տեղյակ պահել Ընկերությանն առնվազն 10 օր առաջ:

17.2. Նոր իրադարձությունների զարգացման ներքո ՀԿ աշխատակիցները Հաճախորդին տեղեկացնում են այդ մասին և վերջինիս հետ միասին վերանայում ներդրումային հայտարարագիրը կամ փոխում արժեթղթերի փաթեթի կառուցվածքը՝ ներդրումային հայտարարագրի պահանջներին համապատասխան:

17.3. Հաճախորդն՝ իր անձնական վիճակից ելնելով, կարող է պահանջել ներդրումային հայտարարագրի վերանայում, որի պարագայում հնարավոր են արժեթղթերի փաթեթի էական փոփոխություններ:

17.4. 17.1-17.3 կետերում նշված դեպքերում ՀԿ աշխատակիցը գրուցում է Հաճախորդի հետ, ինչից հետո Հաճախորդը կայացնում է որոշում:

17.5. Եթե Հաճախորդը որոշում է շարունակել ՀԿ գործընթացը, ապա գործընթացը վերսկսվում է ռազմավարության ընտրության փուլից:

17.6 17.2-17.5 կետերով ամրագրված դրույթների փոփոխությունները ՀԿ աշխատակիցը էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով տեղեկացնում է Հաճախորդին:

17.7. Եթե Հաճախորդը որոշում է դադարեցնել պայմանագիրը, ապա Ընկերությունը փակում է ՀԿ պայմանագրի շրջանակներում բացված բոլոր դիրքերը:

17.7. Հաճախորդի հետ իրականացվում է վերջնահաշվարկ և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ակտիվները վերադարձվում են Հաճախորդին՝ երկկողմանի կնքելով ակտիվների ընդունման/հանձնման ակտ (Հավելված 5):

17.8. Ընկերությունը վերջնահաշվարկից հետո Հաճախորդին տալիս է համապատասխան հաշվետվություններ:

18. Այլ դրույթներ

Պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթերը և արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների հաշվապահական հաշվառումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

19. Եզրափակիչ դրույթներ

13.1. Սույն կանոնները ուժի մեջ են մտնում «ԱԼՖԱՍԵԸՅՈՒՐԻԹԻՉ» ՍՊԸ միակ մասնակցի կողմից հաստատման պահից:

13.2. Ընկերությունը իրավունք ունի սույն Կանոնների մեջ փոփոխություններ մտցնել առանց Հաճախորդի նախնական համաձայնության:

13.3. Սույն Կանոնների փոփոխության մասին Ընկերությունը պետք է տեղյակ պահի Հաճախորդին փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ:

13.4. Արժեթղթերի և/կամ դրամական միջոցների հավատարմագրային կառավարման կամ որ մույնն է արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերում

կատարված փոփոխությունների հետևանքով սույն կանոնների փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում համապատասխան նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ և լրացումներ առաջացնող նորմատիվ իրավական ակտերում սահմանված են այլ ժամկետներ:

- 13.6. Սույն կանոնների հավելվածը կազմող սահմանված ձևերի փոփոխության դեպքում այդ փոփոխությունները ուժի մեջ մտնելու պահից 3 ամսվա ընթացքում նոր ձևերի հետ համատեղ ուժի մեջ են մնում նաև հին ձևերը:
- 13.7. Սույն Կանոնների փոփոխությունների մասին Հաճախորդները տեղեկանում են Ընկերության ինտերնետային կայքի միջոցով:
- 13.8. Սույն կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության միակ մասնակցի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո:

	«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ	Հավելված 1	Էջ 1/7
Հաճախորդի հարցաթերթիկ		Խմբագրություն 1	

Ազգանունը, անունը և հայրանունը (եթե Կառավարման հիմնադիրը իրավաբանական անձ է՝ պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող ֆիզիկական անձինք)
Հասցե՝
Կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ. փոստ և այլն)՝
Ծննդյան ամսաթիվը՝
Քաղաքացիությունը՝
Կրթությունը (գիտական աստիճան/մասնագիտացում)՝
Գործունեության ոլորտը (կազմակերպություն/պաշտոն/կապի միջոցներ)՝
Ձեր խնամակալության տակ գտնվող անձանց թիվը/տարիքը՝

1. Ինչ տիպի ինվեստիցիոն/ներդրումային հաշիվներ Գույք ունեք
 o Չունեմ

o բրոքերային հաշիվ

o հավատարմագրային հաշիվ

o այլ ինվեստիցիոն տիպի հաշիվ՝ խնդրում եմ
 նկարագրել _____

2. Որ երկրներում ունեք ներդրումներ իրականացնելու փորձ

o Հայաստան

o Ռուսաստան

o Այլ ԱՊՀ երկրներ

o ԱՄՆ

o Եվրոպա

o Նշումներ _____

	«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ	Հավելված 1	Էջ 2/7
Հաճախորդի հարցաթերթիկ		Խմբագրություն 1	

3. Ինչ հաճախականությամբ եք Դուք օգտվում մասնագիտացված խորհրդատուներից՝ կապված Ձեր ներդրումների կառավարման հետ

- | | |
|--------------------------|-------------------|
| o Եռամսյակը մեկ անգամ | o Տարին մեկ անգամ |
| o Ընդամենը մի քանի անգամ | o Չեմ օգտվել |

Նշումներ _____

4. . Ձեր գիտելիքները կապիտալ շուկայի վերաբերյալ

- o Ցածր – սահմանափակ ներդրումային փորձ, ներառյալ ընդհանուր բանկային գործարքներ, ներդրումային հավաստագրեր կամ ընդհանուր հիմունքներով հավատարմագրային կառավարմանը հանձնված միջոցներ
- o Միջին - բաժնետոմսերի, պարտատոմսերի և արժեթղթերի շուկաների վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ
- o Առաջատար ոչ մասնագիտական փորձ - ներդրումային հարուստ փորձ, կապիտալի շուկայի խորը իմացություն
- o Մասնագիտական փորձ - ներկայումս կամ անցյալում աշխատել եք որպես արժեթղթերի շուկայի վերլուծաբան, փաթեթի կառավարիչ կամ զբաղվել եք մանատիպ այլ գործունեությամբ

Նշումներ _____

5. Ունեք բավարար գիտելիքներ, փորձ գնահատելու այն բոլոր ռիսկերը, որոնք առկա են ներդրումներ իրականացնելու ժամանակ

- o Այո,
- o Այո, սակայն ինձ անհրաժեշտ է որոշակի խորհրդատվություն,
- o Ոչ, ինձ անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն

Նշումներ _____

6. Եթե Դուք ներկայումս ստանում եք եկամուտ ոչ ներդրումային գործունեությունից (աշխատավարձ, թոշակ և այլն), ապա ինչքան երկար եք ակնկալում դրանք ստանալ
o Ներկայումս ես չեմ ստանում ոչ ներդրումային և ոչ էլ ոչ-ներդրումային եկամուտ

	«Ալֆասերբյուրիթիզ» ՍՊԸ	Հավելված 1	Էջ 3/7
Հաճախորդի հարցաթերթիկ		Խմբագրություն 1	

o Ես ստանում եմ ոչ-ներդրումային եկամուտ, բայց չեմ ակնկալում, որ այդ եկամուտը կստանամ __ տարի հետո:

o Ես ստանում եմ միայն ներդրումային եկամուտ
Նշումներ _____

7. Ձեր ընդհանուր ակտիվների որ մասն է տեղաբաշխված ներդրումային գործիքներում o 20% և ցածր

o 25-50 %

o 50% և ավելին

8. Երբ եք նախատեսում ավարտել Ձեր ներդրումային գործունեությունը

6 ամսից մինչև 1 տարվա

o առաջին եռամսյակում,

o ընթացքում

o 1-3 տարվա ընթացքում

o երբ դա հնարավոր կլինի

Նշումներ _____

9. Երբ եք պատրաստվում կատարել մասհանումներ Ձեր ներդրումներից (բացի պայմանագրով ամրագրված հոսքերից)

o Մեկ եռամսյակից,

o 6 ամսից մինչև 1 տարվա ընթացքում,

o 1-3 տարվա ընթացքում,

o ինչքան հնարավոր է շուտ,

o Նախընտրում եմ ամբողջ գումարը ստանալ նախատեսված ժամանակաշրջանի վերջում

Նշումներ _____

10. Այլ հավասար պայմաններում ներքոհիշյալներից որն է ավելի լավ նկարագրում ներդրված գումարները ետ ստանալու Ձեր համար նախընտրելի մոտեցումը

o Շարունակական, պարբերական մասհանումներ,

o Ամբողջական գումարի ստացում ժամանակաշրջանի վերջում,

o Ոչ կանոնակարգված մասհանումներ ըստ անհրաժեշտության

Նշումներ _____

	«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ	Հավելված 1	Էջ 4/7
Հաճախորդի հարցաթերթիկ		Խմբագրություն 1	

11 Այլ հավասար պայմաններում ներքոհիշյալներից որն է ավելի լավ նկարագրում ներդրումներնը ավելացնելու Ձեր նախընտրած մոտեցումը

o Միանվագ ներդրում,

o Հաշվի կանոնակարգված և պարբերաբար համալրում,

o Հաշվի ոչ կանոնակարգված համալրում՝ ընտրված ներդրումային քաղաքականությամբ կամ ազատ միջոցների գոյացման դեպքում

Նշումներ _____

12. Ինչ նպատակով եք օգտագործելու իրականացված ներդրումներից առաջացած գումարները

o Որպես ընթացիկ եկամուտ,

o Որպես կենսաթոշակ,

o Հարստության կուտակման,

o Բարեգործական,

o Նպատակային (ուսման վարձ, և այլն),

o Առանց որոշակի նպատակի

Նշումներ _____

13. Ներքոհիշյալներից որը լավագույնս կնկարագրի զարգացող տնտեսությամբ պետությունների շուկաներում ներդրումներ իրականացնելու Ձեր մոտեցումը

o Առկա ներդրումների դիվերսիֆիկացիա՝ զարգացող տնտեսությամբ պետությունների շուկաների միջև

o Չարգացող տնտեսությամբ պետությունների շուկաներում ներդրումների միջոցով առկա այլ շուկաներում ներդրումների փաթեթի դիվերսիֆիկացիա

o «Ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքով ներդրում

o Ներդրումների բարձր պոտենցիալի նկատմամբ լավատեսական մոտեցում՝ խելամիտ ցածր ռիսկայնության պայմաններում

o Չարգացող տնտեսությամբ պետությունների շուկաների համեմատական հեշտ կառավարում

	«Ալֆասեյուրիթիզ» ՍՊԸ	Հավելված 1	Էջ 5/7
Հաճախորդի հարցաթերթիկ		Խմբագրություն 1	

o Այլ, խնդրում ենք նկարագրել _____

14. Որ շուկաներում Դուք կցանկանաք ներդրումներ իրականացնել o Միայն Հայաստանում

o Հայաստան և Ռուսաստան

o Հայաստան, Ռուսաստան և ԱՄՆ

o Այլ _____

Նշումներ _____

15. Ինչ հաճախականությամբ Դուք կցանկանաք վերահսկել Ձեր ներդրումային փաթեթը

o աշխատանքային օրվա վերջում

o շաբաթը մեկ անգամ

o ամիսը մեկ անգամ

o այլ _____

Նշումներ _____

16. Ձեր վարվելաձևը, եթե կարճ ժամանակահատվածում (օրինակ մեկ շաբաթվա ընթացքում) ներդրումներից ստացված եկամտաբերությունը լինի 20 % տարեկան

o կհանեն ավելացված մասը

o կհանեն ամբողջ գումարը

o կպահեն

o կներդնեն ավել գումար

Նշումներ _____

17. Ենթադրենք 5 օր անընդմեջ ունենալու եք կորուստներ, որը՞ կլինի կորուստների այն առավելագույն մակարդակը, որը գերազանցելուց հետո կհանեք Ձեր միջոցները կառավարումից:

o 5- 10 %

o 10-15 %

o 15-50 %

o Կպահեն միջոցները մինչև իրավիճակի փոփոխումը

o Կավելացնեն կառավարվող միջոցները բարենպաստ հեռանկարների ակնկալիքով

Նշումներ _____

18. Ինչքանո՞վ եք կարևորում ներդրումների իրացվելիությունը

	«Ալֆասերյուրիթիզ» ՍՊԸ	Հավելված 1	Էջ 6/7
Հաճախորդի հարցաթերթիկ		Խմբագրություն 1	

- o Կարևոր՝ կանխիկ մասհանումներ իրականացնելու նկատառումով
- o Ազդեցիկ, սակայն հասույթը առավել կարևոր է
- o Կարելի է պահել մինչև մարում, կարևորագույնը հասույթն է
- o Պարզապես անհրաժեշտ է ցանկացած պահին ներդրումներից մասհանումների հնարավորություն ունենալ Նշումներ _____

19. Ինչպիսի տարեկան տոկոսադրույք եք ակնկալում շուկայական գործիքներում ներդրումներից, ռիսկի համարժեք պայմաններում

- o 10%-ից պակաս
- o 10-25 %
- o 25-50%
- o ավել քան 50%
- o Նշումներ _____

20. Ինչպիսի տարեկան տոկոսադրույք եք ակնկալում մասնավոր պարտքային գործիքներում ներդրումներից, ռիսկի համարժեք պայմաններում

- o Չեմ մասնակցի մասնավոր գործառնություններում, անկախ հասույթի մեծությունից
- o 10%-ից պակաս
- o 10-15 % o 15-25%
- o ավել քան 25%
